

հատիկ արձանագորութեան մէջ: Նրա գէմքը լրացած տեսնելու համար, մեզ հարկաւոր է այլ ևս այս կամ այն կողմով աւելի խոշոր հիմնարկութիւններէ՝ Ներսիսեան դպրոցի ու Գէորգեան ձեմարանի Մանդինեանը՝ թէ իբրեւ տեսուչ և թէ իբրեւ գործիչ:

Էմմ, Բաժ. Նազարեանց.

ՄԻ ՊՈՌՆՈԴԱՅԻՍՏ

Տխուր և անմխիթարական է դաւառական կեանքը: Սիրտ ամբողջ, մխիթարիչ երևոյթներ եթէ լուսով փնտռելու լինիք, հազիւ գտնէք. իսկ աւերող, վայրենացնող և անբարոյականացնող երևոյթներ—որքան ուզենաք: Յետագայ փաստը այդպիսիներից մէկն է կազմում:

Ծննդեան տօներին, կարծէք իբրեւ նոր-տարուայ ընծայ եռանդուն կերպով երևանցիներին էր բաժանուում մի անարժէք (զին չունեցող) գրքոյի, որի վերնագիրն է «Այրի քահանաների կրկնամուսնութեան խնդրի առթիւ»¹⁾, Հետաքրքրութիւնդ չարժուում է: Մտածում ես՝ ահա հրապարակի վրայ դրած մի հրատապ խնդիր, տեսնենք՝ ինչպէս է չօչափուած և ինչ կզրակացութեան հասցրած այդ նուրբ հարցը: Բանում ես գրքոյի, և ով զարմանք, չես կարողանում կարդալ: Յետ է, ամբողջովին ցեխ: Որոշ հոգատարութեամբ, յատուկ խնամքով՝ գրքի հեղինակը—«Միրզա»-ն, հաւաքել է փողոցային, կիներոյական հայհոյութիւնների ամենավատ տեսակները և միացնելով իր ապականուած երևակայութեան ծնունդ, խայտառակ պատկերների հետ, կազմել է, այսպէս ասած, մի «հայհոյութիւնների բառարան»: Այրի քահանաների կրկնամուսնութեան խնդիրը շատ հեռաւոր և վայրի վերոյ ձևով միայն, այն էլ տեղտեղ հիւսել է այդ հայհոյութիւններին, որից ոչինչ չես հասկանում: Ոյժ գործ զննելով քեզ վրայ, շարունակում ես ընթերցանութիւնը, բայց տեսնում ես, որ շարունակ նոյն ապականուած երևակայութիւնն է, նոյն խայտառակ հայհոյանքները, նոյն ցեխը... Օրինակներ բերել այդ ցեխից, փաստեր առաջ բերել պատկերի գրքոյից, նշանակում

1) Ալէքսանդրապոլ. տպարան Յ. Ղառապեանի, զինը ?

է զուր տեղը կեղտոտել թուղթը և ի չարը գործ դնել ընթերցողի ճաշակն ու զգայմունքը։ Այդ գրքի ցինիկ արտայայտութիւնները, զարմանալի նրբութեան հասցրած ամօթալի ու խայտառակ խորհրդաւոր ակնարկութիւնները չմեցնում են ընթերցողին և կօշմարի ծանրութեամբ ճնշում նրա մտածողութիւնը։ Իսկ լեզուական և քերականական տգիտութիւնը հօ—անտանկի է։ Մնում ևս ապշած։ Ինչու համար է տպուած այս գիրքը և ով է նրա աննման հեղինակը։ Գրքի վրայ տպուած է «հեղինակութիւն Միրզայի» պսիգօնիմը, սակայն կարճ ժամանակից յետոյ հասարակաց կարծիքը՝ հիմնուած իրեն, հեղինակի բերնից ելած խոստովանութեան վրայ հաստատուց, թէ այդ ափսոսանքալիցութիւնների «Միրզան» ոչ այլ ոք է, և թէ ոչ Երևանի անփառունակ քահանաներից մէկը, որին տեղացիք էն զլիւից «Տէր Կինոս» մականունով են կնքել, Երևանի այլի քահանաներից այդ մէկը, մի տգէտ մարդ, որ ամեն հարց, ամեն խնդիր իր փողոցային հայհոյանքներով, խայտառակ սպառնալիքներով և իր նշանաւոր ատրճանակովն է ուղում վճռել՝ ահա այս քանի տարիներից ի վեր։ Մի թէ այրիացած «Միրզա» քահանան իւր մտքերը յայտնելու համար ուրիշ միջոց չգտաւ, բայց եթէ պոռնոյրափիւս... Եւ տէր «Միրզայի» դրչից աւելի բան սպասելի էլ չէր։ Պարզուած է մի տխուր հանգամանք, որ դաւառական լծացած կեանքի յատկանիշ կողմերից մէկն է բնորոշում։ Այդ ամբողջովին ցեխ գրքի հեղինակ տէր «Միրզան» զանազան կախկոսպոսների, վարդապետների և քահանաների անլուր կերպով հայհոյելու և նրանցից՝ հայհոյանքով իր վրէժը հանելու համար է գրել իր գիրքը։ Իսկ դրա համար իբրեւ միջոց ընտրել է քահանաների կրկնամտանութեան խնդիրը, որ շահագրգռական է ամեն մի հոգևորականի համար, ուրեմն կկարդան շատերը, զրանց մէջ և այն անձինք, որոց առատօրէն հայհոյում է, հետեապէս և հայհոյուած կլինին։ Եթէ այդպէս չլինէր, տէր Միրզան 1) իր գրքին մի գին կդնէր և առանց գնի, ձրիաբար չէր ցրուի։ 2) Ռուսահայքի կախկոսպոսներից, վարդապետներից և քահանաներից զոնէ մէկի մասին յականէ—յանուանէ կխօսէր և ոչ թէ զանազան մութ, խորհրդաւոր ակնարկութիւններ կանէր։ չէ որ «հրապարակախօսութիւն է ա—նում»։ 3) Երբ հերթը գալիս է տաճկահայքի կուսակրօններին հայհոյելու, այս անգամ քիչ համարձակութիւն չէր ստանայ և մի քանի անուններ յիշի, վստահ լինելով, որ այդքան հեռաւորութեան վրայ, այն էլ օտար տէրութեան մարդիկ, իրեն գատարան չեն քարշ տայ իր հայհոյանքի համար։ 4) առանձին խնամքով, պոստով, այդ ցեխ գրքից Պօլսից սկսած մինչև Էջմիածին զանազան բնորովի հոգևորականների ձրիաբար չէր ուղարկի, առանց յիշելու թէ ումից (խակական անուն—ազգանունը) է ուղարկուած։ Եւ այս այս—

պէս լինելուց յետոյ, մեզ մնում է միայն ցաւել որ վախկոտ, ազէտ քահանան ուզում է իր անձնական զգուելի վրէժխնդրութիւնները գրական ասպարիզում լուծել, այն էլ պոռնոգրաֆիայով. . *

Ն.-Էան.

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք

Թուրքիայի Սահմանադրութիւնը

և

Օրմանեան Ս. Պասրիարֆի հրաժարականը

Միանգամայն անսպասելի էր յուլիսի 11-ին հրատարակուած Սահմանադրութիւնը Օսմանեան պետութեան մէջ: Բռնութեան, հալածանքի, անիրաւութեան դատական աշխարհը, մանաւանդ Հայ ժողովրդի վերաբերութեամբ, երիտասարդ թուրքերի կուսակցութեան խելօք գործունէութեամբ և մակեդոնական զօրքի ապրտամբութեամբ սահմանադրական է դառնում: Սուլթան Համիդի 32 ամեայ կառավարութիւնը ոչ միայն հիմնովին հակառակ է եղել սահմանադրական ազատութեան, այլ իսկական գազանական բռնութեան մարմնացումն էր: Թէպէտ մի ամիս է անցել արդէն սահմանադրութեան հրատարակութեան օրից և ոչինչ փորձ չի հաղորդուած լրագրութեան մէջ կառավարութեան կամ Սուլթանի կողմից Սահմանադրութիւնը խանգարելու նկատմամբ,

* Եթէ ճշմարիտ է որ վերոյիշեալ գրքիկի հեղինակը քահանայ է, ի բոլոր սրտէ ցաւել կարելի է միայն: Մի՞թէ քահանաներն էլ մրցակից պիտի հանդիսանան կեղտոտ գրականութեան մէջ Մելիք-Աղամեանի նման գրչակներին (տես «Արարատ» Մայիս-Յունիս 1908, եր. 390) իրենց վսեմ կոչման ծառայելու փոխարէն: Խմբ.